Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունիսի 26-ի N 855-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեության կազմակերպման լիցենզավորման հետ կապված հարաբերությունները, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի և բուքմեյքերային գործունեությունների կազմակերպման լիցենզիաների ձևերը, այդ լիցենզիաներն ստանալու, գործունեության իրականացման վայրը փոփոխելու համար հայտերի և լիցենզիա ստանալու հայտին կից ներկայացվող «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) պահանջների համապատասխանության վերաբերյալ հայտարարագրի և տվյալները ներկայացնելու ձևերը (NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 և 11 ձևեր):

2. Սույն կարգում հասկացություններն օգտագործվում են օրենքով սահմանված իմաստով:

3. Լիցենզիա, լիցենզիայի և ներդիրի կրկնօրինակներն ստանալու, լիցենզավորված անձի դիմումի համաձայն լիցենզիայի գործողության կասեցման և լիցենզիայի գործողության դադարեցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմին հանձնվել առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային համակարգի միջոցով՝ սույն կարգով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. Հայտի մերժման կամ բավարարման դեպքում լիազոր մարմին ներկայացված փաստաթղթերը չեն վերադարձվում:

2. ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

5. Հայտատուն շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի գործունեությունների կազմակերպման լիցենզիա ստանալու համար լիազոր մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն N 3 ձևի, որտեղ նշվում են՝

ա) հայտատուի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման (ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ կազմակերպչի պաշտոնական կայքը (հասցեն) և ինտերնետ շահումով խաղի կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները, կազմակերպչի սերվերների տեղակայման վայրը, իսկ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ նաև խաղասրահի հասցեն) վայրերը և հայտատուի պետական գրանցման համարը,

բ) խաղասրահի անվանումը,

գ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը (շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կազմակերպման), որը հայտատուն մտադիր է իրականացնել,

դ) հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

6. Լիցենզիա ստանալու մասին հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,

բ) Կոտայքի մարզի Ծաղկաձորի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքների վարչական սահմաններում շահումով խաղ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կազմակերպելու դեպքում հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), խաղասրահի, նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին),

գ) Կոտայքի մարզի Ծաղկաձորի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքների վարչական սահմաններում շահումով խաղ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կազմակերպելու դեպքում հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հեռավորության համապատասխանության կամ շահումով խաղը հյուրանոցում, մոթելում կազմակերպվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշմամբ առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխանության վերաբերյալ,

դ) խաղային արտադրանքների համապատասխանության սերտիֆիկատների պատճենները, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ պաշտոնական կայքի համապատասխանության սերտիֆիկատի պատճենը,

ե) շահումով խաղի կազմակերպման դեպքում շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձևի (ընդ որում, N 4 ձևում նշված շահումով խաղերի մասին վեց տվյալներից առնվազն չորս տվյալները պետք է լրացված լինեն,

զ) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ,

է) շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ կնքված և հաստատված՝ հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից,

ը) անշարժ գույքի (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի և համապատասխան մարմնի կողմից տրամադրված անշարժ գույքի հատակագծի՝ որպես խաղասրահ նշված խաղասրահով, պատճենները,

թ) հայտարարագիր՝ օրենքի 6-րդ հոդվածով կիրառվող պահանջների համապատասխանության վերաբերյալ՝ համաձայն N 6 ձևի,

ժ) օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,

ժա) պատասխանատու անձի օպերացիոն վկայագրի պատճենը,

ժբ) ինտերնետ շահումով խաղի կազմակերպման դեպքում տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում տարեկան պետական տուրքի գումարի կրկնակի չափով դեպոզիտի առկայության մասին:

7. Հայտատուն գործունեության իրականացման վայրի փոփոխման համար լիազոր մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն N 5 ձևի, որտեղ նշվում են՝

ա) հայտատուի անվանումն ու կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և նոր գործունեության իրականացման վայրերը (ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ կազմակերպչի պաշտոնական կայքը (հասցեն) և ինտերնետ շահումով խաղի կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները) և հայտատուի պետական գրանցման համարը,

բ) լիցենզիայի համարը և տալու ամսաթիվը,

գ) խաղասրահի անվանումը,

դ) հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

8. Գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,

բ) Կոտայքի մարզի Ծաղկաձորի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքների վարչական սահմաններում շահումով խաղ կամ

անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կազմակերպելու դեպքում հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), խաղասրահի, նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին),

գ) Կոտայքի մարզի Ծաղկաձորի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքների վարչական սահմաններում շահումով խաղ կամ անմիջականորեն (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կազմակերպելու դեպքում հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հեռավորության համապատասխանության կամ շահումով խաղը հյուրանոցում, մոթելում կազմակերպվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշմամբ առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխանության վերաբերյալ,

դ) շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ կնքված ու հաստատված՝ հայտատուի կառավարման համապատասխան մարմնի կողմից,

ե) շահումով խաղի կազմակերպման դեպքում շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների, խաղասեղանների ծագման սերտիֆիկատների պատճենները և շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձևի, եթե փոփոխվելու են N 4 ձևում նշված՝ շահումով խաղերի մասին ներկայացված տվյալները: Ընդ որում, եթե N 4 ձևում նշված շահումով խաղերի մասին տվյալները փոփոխվել են, ապա N 4 ձևում նշված շահումով խաղերի մասին վեց տվյալներից առնվազն չորս տվյալները պետք է լրացված լինեն,

զ) անշարժ գույքի (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի և համապատասխան մարմնի

կողմից տրամադրված անշարժ գույքի հատակագծի՝ որպես խաղասրահ նշված խաղասրահով, պատճենները,

ժ) խաղային արտադրանքների համապատասխանության սերտիֆիկատների պատճեն-ները, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ պաշտոնական կայքի համապատասխանության սերտիֆիկատի պատճենը,

ժա) օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին:

9. Եթե շահումով խաղի կազմակերպչի կողմից շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների կամ լրացումների արդյուն-քում փոփոխվելու են N 4 ձևում նշված՝ շահումով խաղերի մասին ներկայացված տվյալները, ապա կազմակերպիչը ներկայացնում է նաև շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների, խաղասեղանների ծագման սերտիֆիկատների պատճենները և շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձևի: Ընդ որում, եթե N 4 ձևում նշված շահումով խաղերի մասին տվյալները փոփոխվել են, ապա N 4 ձևում նշված շահումով խաղերի մասին վեց տվյալներից առնվազն չորս տվյալները պետք է լրացված լինեն:

10. Լիազոր մարմինը սույն կարգի 6-րդ կետի «բ», «գ» և «զ» կամ 8-րդ կետի «բ», «գ» և «զ» ենթակետերով սահմանված փաստաթղթերն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարում Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության և անշարժ գույքի (խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության և օգտագործման պետական գրանցման վերաբերյալ,

որի մասին տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն լիազոր մարմնին տրամադրում է հարցումն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Լիազոր մարմինը սույն կարգի 6-րդ կետի «թ» ենթակետով սահմանված փաստաթղթերն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարում ներկայացված տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով համապատասխան պետական իրավասու մարմիններին և այն մարմիններին, որոնք տիրապետում են համապատասխան տեղեկատվությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով միջազգային կառույցներին և օտարերկրյա մարմիններին:

3. ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

12. Բուքմեյքերային գործունեության կազմակերպման լիցենզիա ստանալու համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում հայտ, որտեղ նշվում են՝

ա) հայտատուի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության իրականացման վայրերը, կազմակերպչի պաշտոնական կայքը (հասցեն) և բուքմեյքերային գործունեության կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները և հայտատուի պետական գրանցման համարը,

բ) բուքմեյքերային գործունեության տեսակը և անվանումը,

գ) հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

13. Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում՝ անշարժ գույքի (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի համապատասխան մարմնի կողմից տրամադրված անշարժ գույքի հատակագծի՝ որպես խաղասրահ նշված խաղասրահով,

բ) խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում՝ պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից

տրված տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջ-ներին համապատասխան տեղադրելու մասին,

գ) խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,

դ) բուքմեյքերային գործունեության կազմակերպման և անցկացման կանոնակարգը (կանոնակարգերը)՝ կնքված և հաստատված հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից,

ե) բուքմեյքերային գործունեության կազմակերպման տոմսի, անդորրագրի կամ այլ օրենքով նախատեսված փաստաթղթի աշխատանքային օրինակը,

զ) հայտատուի հաշվետու վերջին տարվա ֆինանսական հաշվետվությունները,

է) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորու-թյունների մասին տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ,

ը) իրային շահումների դեպքում՝ մատակարարի հետ կնքված պայմանագիրը կամ իրային շահումների առկայության մասին տեղեկանք՝ ըստ քանակի, տեսակի և արժեքի,

թ) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում տարեկան պետական տուրքի գումարի կրկնակի չափով դեպոզիտի առկայության մասին,

ժ) հայտարարագիր՝ օրենքի 6-րդ հոդվածով կիրառվող պահանջների համապատաս-խանության վերաբերյալ՝ համաձայն N 6 ձևի,

ժա) հայտարարագիր՝ օրենքի 16-րդ հոդվածով կիրառվող պահանջի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխա-նության վերաբերյալ (նշելով գործունեության իրականացման վայրը, խաղասրահի մակերեսը

(քառ. մետրերով), նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին),

ժբ) հայտարարագիր՝ գործունեության իրականացման վայրի օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության համապատասխանության վերաբերյալ,

ժդ) պաշտոնական կայքի համապատասխանության սերտիֆիկատի պատճենը,

ժգ) պատասխանատու անձի օպերացիոն վկայագրի պատճենը,

ժե) տեղեկատվական ռեսուրսները ոչ ՀՀ տարածքում տեղակայելու դեպքում (այդ թվում՝ ամպային ծառայություններից օգտվելու դեպքում) ծառայությունների մատակարարման պայմանագիր:

13. Լիազոր մարմինը սույն կարգի 12-րդ կետի «ժ» ենթակետով սահմանված փաստաթղթերն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարում ներկայացված տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով համապատասխան պետական իրավասու մարմիններին և այն մարմիններին, որոնք տիրապետում են համապատասխան տեղեկատվությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով միջազգային կառույցներին և օտարերկրյա մարմիններին:

14. Լիազոր մարմինը սույն կարգի 12-րդ կետի «ժբ» ենթակետով սահմանված փաստաթուղթն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարում Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից

հեռավորության և անշարժ գույքի (խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության և օգտագործման պետական գրանցման վերաբերյալ, որի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն լիազոր մարմնին տրամադրում է հարցումն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

15. Կազմակերպիչը՝ կանոնակարգում խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության կազմակերպման առկայության դեպքում, գործունեության իրականացման վայրի և օրենքի 9-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող է հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե: Սույն կետով սահմանված տեղեկատվությունը տրամադրվում է վճարովի հիմունքներով՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված չափերով և ժամկետներում:

16. Հայտատուն գործունեության իրականացման վայրի փոփոխման համար լիազոր մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն N 5 ձևի, որտեղ նշվում են՝

ա) հայտատուի անվանումն ու կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և նոր գործունեության իրականացման վայրերը (բուքմեյքերային գործունեությունը խաղային ինտերակտիվ հարթակում կազմակերպման դեպքում՝ կազմակերպչի պաշտոնական կայքը (հասցեն) և կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները) և հայտատուի պետական գրանցման համարը,

բ) լիցենզիայի համարը և տալու ամսաթիվը,

գ) բուքմեյքերային գործունեության տեսակը և անվանումը,

դ) հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

17. Գործունեության իրականացման վայրի փոփոխման մասին հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում՝ անշարժ գույքի (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի համապատասխան մարմնի կողմից տրամադրված անշարժ գույքի հատակագծի՝ որպես խաղասրահ նշված խաղասրահով,

բ) խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում՝ պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,

գ) խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,

դ) բուքմեյքերային գործունեության կազմակերպման և անցկացման կանոնակարգը (կանոնակարգերը)՝ կնքված և հաստատված հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից,

ե) հայտարարագիր՝ օրենքի 16-րդ հոդվածով կիրառվող պահանջի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (նշելով գործունեության իրականացման վայրը, խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին),

զ) հայտարարագիր՝ գործունեության իրականացման վայրի օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում

գտնվելու և տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության համապատասխանության վերաբերյալ,

է) պաշտոնական կայքի համապատասխանության սերտիֆիկատի պատճենը:

4. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

18. Վիճակախաղերի գործունեության կազմակերպման լիցենզիա ստանալու համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում հայտ, որտեղ նշվում են՝

ա) հայտատուի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը և հայտատուի պետական գրանցման համարը,

բ) վիճակախաղի (վիճակախաղերի) անվանումը և տեսակը,

գ) հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

19. Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) հայտատուի իրավասու մարմնի որոշումը տվյալ վիճակախաղի (վիճակախաղերի) կազմակերպման և անցկացման մասին,

բ) խաղասրահի միջոցով վիճակախաղի կազմակերպման դեպքում՝ պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,

գ) իրային շահումների դեպքում՝ մատակարարի հետ կնքված պայմանագիրը կամ իրային շահումների առկայության մասին տեղեկանք՝ ըստ քանակի, տեսակի և արժեքի,

դ) վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ կնքված և հաստատված հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից,

ե) վիճակախաղի (վիճակախաղերի) տոմսի աշխատանքային օրինակը,

զ) հայտատուի հաշվետու վերջին տարվա ֆինանսական հաշվետվությունները,

է) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ,

ը) խաղասրահի միջոցով վիճակախաղի կազմակերպման դեպքում օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին,

թ) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում տարեկան պետական տուրքի գումարի կրկնակի չափով դեպոզիտի առկայության մասին,

ժ) հայտարարագիր՝ օրենքի 6-րդ հոդվածով կիրառվող պահանջների համապատասխանության վերաբերյալ՝ համաձայն N 6 ձևի,

ժա) հայտարարագիր՝ օրենքի 9-րդ հոդվածով կիրառվող պահանջների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (նշելով գործունեության իրականացման վայրը, խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին),

ժբ) հայտարարագիր՝ գործունեության իրականացման վայրի օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության համապատասխանության վերաբերյալ,

ժգ) պատասխանատու անձի օպերացիոն վկայագրի պատճենը,

ժդ) տեղեկատվական ռեսուրսները ոչ ՀՀ տարածքում տեղակայելու դեպքում (այդ թվում՝ ամպային ծառայություններից օգտվելու դեպքում) ծառայությունների մատակարարման պայմանագիր:

20. Լիազոր մարմինը սույն կարգի 20-րդ կետի «ժ» ենթակետով սահմանված փաստաթղթերն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարում ներկայացված տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով համապատասխան պետական իրավասու մարմիններին և այն մարմիններին, որոնք տիրապետում են համապատասխան տեղեկատվությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով միջազգային կառույցներին և օտարերկրյա մարմիններին:

21. Լիազոր մարմինը սույն կարգի 20-րդ կետի «ժբ» ենթակետով սահմանված փաստաթուղթն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարում Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության և անշարժ գույքի (խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության և օգտագործման պետական գրանցման վերաբերյալ, որի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն լիազոր մարմնին տրամադրում է հարցումն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Կազմակերպիչը՝ խաղասրահի միջոցով վիճակախաղի դեպքում, գործունեության իրականացման վայրի օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող է հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե: Սույն կետով սահմանված տեղեկատվությունը տրամադրվում է վճարովի հիմունքներով՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված չափերով և ժամկետներում:

Ձև 1

Տրված է
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
20 թվականի
_____ -ի _____ -ի N հրամանով

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարի տեղակալ
_____
Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա
ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Գրանցման համարը _____ ՇԽ -

Կազմակերպության անվանումը _____ _____

Կազմակերպության գտնվելու վայրը _____ _____

Գործունեության իրականացման վայրը ____ _____

Տրված է _____ ___ _____ 20 թ.

Գործողության ժամկետը _____ անժամկետ

Ձև 2

Տրված է
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի 20 թվականի
_____ -ի _____ -ի N հրամանով
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի տեղակալ
_____
Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա
ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Գրանցման համարը _____ ԻՇԽ-

Կազմակերպության անվանումը---------- ----------

Կազմակերպության գտնվելու վայրը ---------- ----------

Գործունեության իրականացման վայրը (անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ նաև խաղասրահի հասցեն)---------- ----------

Պաշտոնական կայքը (հասցեն) և ինտերնետ շահումով խաղի կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները---------- ----------

Տրված է ___ _____ 20 թ.

Գործողության ժամկետը _____անժամկետ _____

Ձև 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ

□ ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

□ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և հայտատուի պետական գրանցման համարը _____
_____

Հայտատուի գտնվելու վայրը _____
_____

Հայտատուի գործունեության իրականացման վայրը (ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ կազմակերպչի պաշտոնական կայքը (հասցեն) և ինտերնետ շահումով խաղի կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները, կազմակերպչի սերվերների տեղակայման վայրը, իսկ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ նաև խաղասրահի հասցեն) _____
_____

Խաղասրահի անվանումը _____
_____

Հեռախոսահամարը _____

ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ՝

1. Պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը՝ դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին _____ ☐

2. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին_____ ☐

3. Կոտայքի մարզի Ծաղկաձորի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքների վարչական սահմաններում շահումով խաղ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կազմակերպելու դեպքում հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), խաղասրահի, նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին) _____ ☐

4. Շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների, խաղասեղանների ծագման սերտիֆիկատների պատճենները ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ պաշտոնական կայքի համապատասխանության սերտիֆիկատի պատճենը _____ ☐

5. Շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձևի _____ ☐

6. Կոտայքի մարզի Ծաղկաձորի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքների վարչական սահմաններում շահումով խաղ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կազմակերպելու դեպքում հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հեռավորության համապատասխանության կամ հյուրանոցում, մոթելում կազմակերպվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշմամբ առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխանության վերաբերյալ_____ ☐

7. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ_____ ☐

8. Ինտերնետ շահումով խաղի կազմակերպման դեպքում տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում տարեկան պետական տուրքի գումարի կրկնակի չափով դեպոզիտի առկայության մասին _____ ☐

9. Շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ կնքված և հաստատված՝ հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից _____ ☐

10. Անշարժ գույքի (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի համապատասխան մարմնի կողմից տրամադրված անշարժ գույքի հատակագծի՝ որպես խաղասրահ նշված խաղասրահով_____ ☐

11. Հայտարարագիր՝ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 6-րդ հոդվածով կիրառվող պահանջների համապատասխանության վերաբերյալ_____ ☐

Սույնով հայտնում եմ նաև, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը խախտված չէ:

Առդիր՝ թերթ:

Ներկայացված փաստաթղթերը և տվյալները ճիշտ են,
որի համար ստորագրում եմ _____
(անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը)

____ _____ 20 թ.

Ձև 4

ՏՎՅԱԼՆԵՐ
ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Տվյալներ խաղասեղանների մասին				
	ծագման սերտիֆիկատի համարը	տեսակները	մոդելը	ծածկագիրը	սերիական համարը
1	2	3	4	5	6
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					
9.					
10.					
...					

NN ը/կ	Տվյալներ խաղային սարքավորումների մասին				
	ծագման սերտիֆիկատի համարը	տեսակները	մոդելը	ծածկագիրը	սերիական համարը
1	2	3	4	5	6
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					
9.					
10.					
11.					
12.					
13.					
14.					
15.					
...					

Ներկայացված տվյալները ճիշտ են,
որի համար ստորագրում եմ՝ _____
(անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը)

____ _____ 20 թ.

Ձև 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ

☐ ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

☐ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և հայտատուի պետական գրանցման համարը _____
_____

Հայտատուի գտնվելու վայրը _____
_____

Հայտատուի գործունեության իրականացման նոր վայրը (ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ կազմակերպչի նոր պաշտոնական կայքը (հասցեն) և նոր ինտերնետ շահումով խաղի կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները, կազմակերպչի սերվերների տեղակայման վայրը, սերվերները ոչ ՀՀ տարածքում տեղակայման (այդ թվում՝ ամպային տիրույթում) ծառայությունների մատուցման պայմանագիրը, իսկ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) բուքմեյքերային գործունեության կազմակերպման դեպքում՝ նաև խաղասրահի հասցեն) _____
_____

Լիցենզիայի համարը և այն տալու ամսաթիվը _____
_____ 20 թ.

Խաղասրահի անվանումը _____
_____

Հեռախոսահամարը _____

ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ՝

1. Պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը՝ դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին _____ ☐

2. Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին_____ ☐

3. Կոտայքի մարզի Ծաղկաձորի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքների վարչական սահմաններում շահումով խաղ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կազմակերպելու դեպքում հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), խաղասրահի, նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին) _____ ☐

4. Շահագործման համար նախատեսված խաղային սարքավորումների, խաղասեղանների ծագման սերտիֆիկատների պատճենները ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում՝ պաշտոնական կայքի համապատասխանության սերտիֆիկատի պատճենը _____ ☐

5. Շահումով խաղերի մասին տվյալները՝ համաձայն N 4 ձևի _____ ☐

6. Կոտայքի մարզի Ծաղկաձորի, Վայոց ձորի մարզի Ջերմուկի, Գեղարքունիքի մարզի Սևանի, Սյունիքի մարզի Մեղրիի համայնքների վարչական սահմաններում շահումով խաղ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղ կազմակերպելու դեպքում հայտարարագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1229-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հեռավորության համապատասխանության կամ հյուրանոցում, մոթելում կազմակերպվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշմամբ առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխանության վերաբերյալ_____ ☐

7. Շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ կնքված և հաստատված՝ հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից _____ ☐

8. Անշարժ գույքի (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի համապատասխան մարմնի կողմից տրամադրված անշարժ գույքի հատակագծի՝ որպես խաղասրահ նշված խաղասրահով_____ ☐

Առդիր՝ թերթ:

Ներկայացված փաստաթղթերը և տվյալները ճիշտ են,
որի համար ստորագրում եմ _____
(անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը)

____ _____ 20 թ.

Ձև N 6

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

_____
(կազմակերպության անվանումը)

1. Սույն հայտարարագիրը ստորագրելով և լիազոր մարմին ներկայացնելով՝ հայտարարում և հավաստում եմ, որ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը (բաժնետերերը), փայատերը (փայատերերը) կամ մասնակիցը (մասնակիցները) կամ նրանց իրական շահառուները, կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

1) չի հանդիսանում այնպիսի ֆիզիկական անձ, որը՝

ա. դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

բ. սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ,

գ. չի ներկայացնում իր կողմից ներդրված դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն),

դ. օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

զ. այնպիսի իրավաբանական անձի մասնակից է հանդիսացել, որի՝ խաղային գործունեության կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է՝ որպես պատասխանատվության միջոց.

2) չի հանդիսանում այնպիսի իրավաբանական անձ՝

ա. որի նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ մասնակիցը կամ տնօրենը համապատասխանում է 1-ին կետի 1-ին ենթակետում նշված պարբերություններից որևէ մեկին,

բ. որը գտնվում է սնանկացման վարույթում,

գ. որի՝ խաղային գործունեության կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է՝ որպես պատասխանատվության միջոց,

դ. որը չի ներկայացնում իր կողմից ներդրվող դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

2. Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ՝

1) իրական շահառուները համընկնում են նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի), փայատիրոջ (փայատերերի) կամ մասնակցի (մասնակիցների) հետ (այլ շահառուներ չկան).

2) իրական շահառուներ առկա են (տեղեկություններ վերջիններիս մասին՝ անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի տվյալները կամ անվանումը և գրանցման համարը)

_____
_____
_____
_____:

3. Հայտարարագրին կից ներկայացվում են հայտարարագրում նշված բոլոր ֆիզիկական անձանց անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև արտասահմանում գրանցված իրավաբանական անձանց գրանցումը հավաստող պատշաճ կերպով վավերացված փաստաթղթերը:

4. Կազմակերպչի պատասխանատու անձ նշանակված անձի՝

1) անունը, հայրանունը, ազգանունը_____

2) անձնագրի տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)_____
_____
3) պաշտոնի անվանումը_____
4) պաշտոնական գործառույթների նկարագրությունը_____
_____
5) պաշտոնում նշանակման ամսաթիվը_____
6) պաշտոնում նշանակման հիմքը (հրաման, արձանագրություն և այլն)_____
_____:

5. Սույն հայտարարագիրը ստորագրելով և լիազոր մարմին ներկայացնելով՝ հայտարարում և հավաստում եմ, որ ղեկավար պաշտոնում նշանակված անձը չի հանդիսանում այնպիսի ֆիզիկական անձ, որը՝

1) դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

2) օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից.

3) սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ:

6. Հայտարարագրին կից ներկայացվում են՝

1) պատասխանատու անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) պատասխանատու անձի պաշտոնում նշանակելու համար հիմք հանդիսացած փաստաթղթի (հրաման, արձանագրություն և այլն)՝ կազմակերպչի կողմից հաստատված պատճենը:

7. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

Տնօրեն _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____ _____ 20____թ.
(ստորագրությունը)

Ձև N 7

Տրված է
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
20 թվականի
_____ -ի N հրամանով

Հայաստանի
Հանրապետության էկոնոմիկայի
նախարարի տեղակալ

_____
Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա
ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Գրանցման համարը _____ **ԲԳ-**

Կազմակերպության անվանումը---------- ----------

Կազմակերպության գտնվելու վայրը ---------- ----------

Գործունեության իրականացման վայրը ---------- ----------

Պաշտոնական կայքը (հասցեն) և բուքմեյքերային գործունեության կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները---------- ----------

Տրված է ___ _____ 20 թ.

Գործողության ժամկետը _____ անժամկետ _____

Ձև N 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ

ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և հայտատուի պետական գրանցման համարը _____
_____

Հայտատուի գտնվելու վայրը _____

Հայտատուի գործունեության իրականացման վայրը, կազմակերպչի սերվերների տեղակայման վայրը, սերվերները ոչ ՀՀ տարածքում տեղակայման (այդ թվում՝ ամպային տիրույթում) ծառայությունների մատուցման պայմանագիրը, իսկ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) բուքմեյքերային գործունեության կազմակերպման դեպքում՝ նաև խաղասրահի հասցեն _____

Բուքմեյքերային գործունեության տեսակը և անվանումը _____

Պաշտոնական կայքը (հասցեն) և բուքմեյքերային գործունեության կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները _____
_____

Հեռախոսահամարը _____

ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ՝

1. Խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում՝ պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը՝ դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին _____ ☐

2. Խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում՝ օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին_____ ☐

3. Հայտարարագիր՝ օրենքի 16-րդ հոդվածով կիրառվող պահանջի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (նշելով գործունեության իրականացման վայրը, խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին) ☐

4. Պաշտոնական կայքի համապատասխանության սերտիֆիկատի պատճենը _____ ☐

5. Պատասխանատու անձի օպերացիոն վկայագրի պատճենը _____ ☐

6. Հայտարարագիր՝ գործունեության իրականացման վայրի օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության համապատասխանության վերաբերյալ_____ ☐

7. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ_____ ☐

8. Տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում տարեկան պետական տուրքի գումարի կրկնակի չափով դեպոզիտի առկայության մասին _____ ☐

9. Բուքմեյքերային գործունեության կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ կնքված և հաստատված՝ հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից _____ ☐

10. Անշարժ գույքի (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի համապատասխան մարմնի կողմից տրամադրված անշարժ գույքի հատակագծի՝ որպես խաղասրահ նշված խաղասրահով_____ ☐

11. Հայտարարագիր՝ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 6-րդ հոդվածով կիրառվող պահանջների համապատասխանության վերաբերյալ_____ ☐

Սույնով հայտնում եմ նաև, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը խախտված չէ:

Առդիր՝ թերթ:

Ներկայացված փաստաթղթերը և տվյալները ճիշտ են,
որի համար ստորագրում եմ _____
(անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը)

____ _____ 20 թ.

Ձև N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ

ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և հայտատուի պետական գրանցման համարը _____
_____

Հայտատուի գտնվելու վայրը _____
_____

Հայտատուի գործունեության իրականացման նոր վայրը, կազմակերպչի սերվերների տեղակայման վայրը, սերվերները ոչ ՀՀ տարածքում տեղակայման (այդ թվում՝ ամպային տիրույթում) ծառայությունների մատուցման պայմանագիրը, իսկ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) բուքմեյքերային գործունեության կազմակերպման դեպքում՝ նաև խաղասրահի հասցեն) վայրերը, (կազմակերպչի նոր պաշտոնական կայքը (հասցեն) և նոր ինտերնետ շահումով խաղի կազմակերպման համար նախատեսված խաղային հավելվածները _____
_____

Լիցենզիայի համարը և այն տալու ամսաթիվը _____ 20 թ.

Բուքմեյքերային գործունեության տեսակը և անվանումը _____
_____

Հեռախոսահամարը _____

ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ՝

1. Խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում՝ պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը խաղասրահի տարածքում համակարգը՝ դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին _____ ☐

2. Խաղասրահի միջոցով բուքմեյքերային գործունեության դեպքում՝ օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին_____ ☐

3. Հայտարարագիր՝ օրենքի 16-րդ հոդվածով կիրառվող պահանջի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (նշելով գործունեության իրականացման վայրը, խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին) _____ ☐

4. Պաշտոնական կայքի համապատասխանության սերտիֆիկատի պատճենը _____ ☐

5. Պատասխանատու անձի օպերացիոն վկայագրի պատճենը _____ ☐

6. Հայտարարագիր՝ գործունեության իրականացման վայրի օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության համապատասխանության վերաբերյալ_____ ☐

7. Բուքմեյքերային գործունեության կազմակերպման և անցկացման ՝ կնքված և հաստատված՝ հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից _____ ☐

8. Անշարժ գույքի (գործունեության իրականացման վայրի, խաղասրահի տարածքի) նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի համապատասխան մարմնի կողմից տրամադրված անշարժ գույքի հատակագծի՝ որպես խաղասրահ նշված խաղասրահով_____ ☐

Առդիր՝ թերթ:

Ներկայացված փաստաթղթերը և տվյալները ճիշտ են,
որի համար ստորագրում եմ _____
(անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը)
____ _____ 20 թ.

Ձև N 10

Տրված է
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
20 թվականի
_____ -ի N հրամանով

Հայաստանի
Հանրապետության էկոնոմիկայի
նախարարի տեղակալ

_____
Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա
ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Գրանցման համարը _____ ՎԽ _

Կազմակերպության անվանումը_____

Կազմակերպության գտնվելու վայրը _____

Տրված է _____ _____20 թ.

Գործողության ժամկետը _____ անժամկետ

Ձև N 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ
ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և հայտատուի պետական գրանցման համարը _____
_____

Հայտատուի գտնվելու վայրը _____
_____

Հայտատուի գործունեության իրականացման վայրը, կազմակերպչի սերվերների տեղակայման վայրը, սերվերները ոչ ՀՀ տարածքում տեղակայման (այդ թվում՝ ամպային տիրույթում) ծառայությունների մատուցման պայմանագիրը, իսկ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) բուքմեյքերային գործունեության կազմակերպման դեպքում՝ նաև խաղասրահի հասցեն _____
_____

Վիճակախաղի (վիճակախաղերի) անվանումը և տեսակը _____
_____

Հեռախոսահամարը _____

ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ՝

Հայտատուի իրավասու մարմնի որոշումը տվյալ վիճակախաղի (վիճակախաղերի) կազմակերպման և անցկացման մասին ☐

Վիճակախաղի (վիճակախաղերի) կազմակերպման և անցկացման կանոնակարգը (կանոնակարգերը)՝ կնքված և հաստատված հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից ☐

Վիճակախաղի (վիճակախաղերի) տոմսի աշխատանքային օրինակը ☐

Հայտատուի հաշվետու վերջին տարվա ֆինանսական հաշվետվությունները ☐

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ☐

Օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետի «ժա» ենթակետով սահմանված տեսանկարահանման համար համապատասխան համակարգը տեղադրող պատասխանատու անձի կողմից տրված տեղեկանքը՝ խաղասրահի տարածքում համակարգը դրա տեխնիկական պահանջներին համապատասխան տեղադրելու մասին ☐

Տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում տարեկան պետական տուրքի գումարի կրկնակի չափով դեպոզիտի առկայության մասին ☐

Հայտարարագիր՝ օրենքի 6-րդ հոդվածով կիրառվող պահանջների համապատասխանության վերաբերյալ՝ համաձայն N 3 ձևի ☐

Հայտարարագիր՝ օրենքի 9-րդ հոդվածով կիրառվող պահանջների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանության վերաբերյալ (նշելով գործունեության իրականացման վայրը, խաղասրահի մակերեսը (քառ. մետրերով), նախասրահի, դրամարկղի և սանհանգույցի տեղակայման առկայության մասին) ☐

Հայտարարագիր՝ գործունեության իրականացման վայրի օրենքի 9-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վարչական սահմաններում գտնվելու և գործունեության իրականացման վայրի՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից հեռավորության համապատասխանության վերաբերյալ ☐

Պատասխանատու անձի օպերացիոն վկայագրի պատճենը ☐

Առդիր՝ թերթ:

Ներկայացված փաստաթղթերը և տվյալները ճիշտ են,
որի համար ստորագրում եմ՝ _____
(ստորագրությունը, պաշտոնը, անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ